«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ տնօրինության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ:

Գևորգ Մաչանյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության նախագահ - Գործադիր տնօրեն

30.04.26թ

Արկադի Փինաչյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի տեղակալ – Ներդրումային դեպարտամենտի տնօրեն

30.04.26

Գրիգոր Մովսիսյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի առաջին տեղակալ

30.04.26թ

Գրիգոր Հովհաննիսյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի տեղակալ – Վարկավորման դեպարտամենտի տնօրեն

30.04.26.

Հայկ Մուրադյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի տնօրեն

30.04.2026թ.

Արա Մակարյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի տեղակալ – Բիզնեսի զարգացման դեպարտամենտի տնօրեն

30.04.26թ.

Անժելա Բաբսեղյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի տեղակալ – Առևտրի ֆինանսավորման և թղթակցային հարաբերությունների դեպարտամենտի տնօրեն

30.04.26

Աստղիկ Վանյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ-
Ռիսկերի կառավարման դեպարտամենտի տնօրեն

30.04.26

Սեդրակ Բաղդասարյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Ֆինանսական տնօրեն- Գլխավոր հաշվապահ

30.04.2026թ.

Բանկը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2004թ. սեպտեմբերի 15-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն: «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 2004թ-ի հոկտեմբերի 7-ին: Բանկի պետական գրանցման վկայականի համարն է N 0476: 2005թ. փետրվարի 25-ին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Բանկ) տրամադրվել է բանկային գործունեության թիվ 84 լիցենզիան:

Բանկի ապրանքային նշանն է՝

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

որը գրանցվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 25.08.2005թ.:

Բանկի գործունեության ողջ ընթացքում Բանկի համար սահմանված հիմնարար արժեքները և նպատակները չեն կրել էական փոփոխություններ և ներկայումս չկան այնպիսի նախադրյալներ, որոնք թույլ կտան ենթադրել, որ միջնաժամկետ հատվածում կարող են ենթարկվել գլոբալ փոփոխությունների: Սակայն վերջին տարիներին «Կայուն» ֆինանսավորման ոլորտում Բանկի ակտիվ մասնակցությունը, գրանցած հաջողություններն ու ձեռքբերումները հանդիսացել են գրավական, որ Բանկն առաջարկի իր հաճախորդներին ժամանակակից, նորարարական և տեխնոլոգիական լուծումներ պարունակող ծառայություններ՝ ընդգրկելով այդ ոլորտի ծառայությունները ռազմավարական բիզնես ուղղություններում: Առանձնահատուկ կարևորություն տալով կլիմայի դիմակայունության բարձրացմանը և կլիմայական ռիսկերի կառավարմանը՝ Բանկը նպատակ ունի ապահովել իր գործունեության շարունակականությունը՝ ներդնելով պատասխանատու մոտեցումներ և խթանելով կայուն զարգացման սկզբունքները: Այս ամենն իր արտացոլումն է գտել նաև Բանկի առաքելության և տեսլականի մեջ: Հետևաբար, ստորև ներկայացնում ենք Բանկի առաքելությունն ու տեսլականը.

Բանկի առաքելությունն է. Հավատարիմ մնալով սոցիալական պատասխանատվության ու կայուն ֆինանսավորման մեր սկզբունքներին՝ հաճախորդներին առաջարկել իրական լուծումներ և ստեղծել կայուն և մնայուն արժեքներ:

Բանկի տեսլականն է. դառնալ տարածաշրջանում կայուն ֆինանսավորման առաջատար՝ նպաստելով կլիմայի դիմակայունության ամրապնդմանը և կլիմայական ռիսկերի նվազեցմանը: Բանկը նպատակ ունի լինել վստահելի գործընկեր, որը խթանում է կանաչ տնտեսության աճը և սոցիալական արժեքների ստեղծումը, շարունակաբար ներդնելով ժամանակակից լուծումներ և նպաստելով տեխնոլոգիական առաջընթացին:

Բանկի բիզնես-փիլիսոփայության հիմնարար արժեքներն են.

- *Պրոֆեսիոնալիզմ,*
- *Գործընկերություն,*
- *Հուսալիություն*
- *Ապահովություն,*
- *Ճկունություն*

Բանկի համար իր արժեքները կարևոր հիմնաքար են հանդիսանում, ուստի Բանկի աշխատակիցներն իրենց ամենօրյա գործունեության ընթացքում առաջնորդվում են այդ արժեքներով, որն էլ հանդիսանում է Բանկի առաջմղման գրավականը:

Բանկի ռազմավարությունը նպատակաուղղված է հետևյալ միջնաժամկետ նպատակների իրականացմանը.

• ձևավորել բավարար շահույթ՝ ապահովելով Բանկի կապիտալի շահութաբերության ցուցանիշի ընդունելի մակարդակ և այդ ցուցանիշով ունենալ ՀՀ բանկային համակարգում առաջատար դիրքեր, ինչպես նաև Ծրագրի շրջանակում շահույթի կանխատեսումներում անդրադառնալ Բանկի կողմից նշված ժամանակահատվածի համար վարվող Բանկի շահութաբաժնային քաղաքականությանը, այսինքն՝ Բանկի բաժնետերերին նախատեսվում է վճարվել շահութաբաժիններ և ինչ չափով:

• պահպանել և զարգացնել շուկայում Բանկի դիրքերն այն հիմնական բիզնես ուղղություններում, որտեղ Բանկը վերջին տարիներին մշտապես զբաղեցրել է առաջատար դիրքեր, միջազգային և տեղական շուկաներում ֆակտորինգային գործառնություններով ու բիզնեսի վարկավորման շուկայում առանձին գործիքների ուղղությամբ, որոնք պլանավորվող ժամանակահատվածում ունեն զարգացման մեծ պոտենցիալ,

• բարելավել Բանկի դիրքերն այն հիմնական բիզնես ուղղություններում, որտեղ Բանկը չի զբաղեցնում առաջատար դիրքեր, սակայն ունի զարգացման էական պոտենցիալ, մասնավորապես, ՓՄՁ վարկավորում, ԱՖԾ, «Կանաչ» և էներգաարդյունավետության ֆինանսավորում, կանայք բիզնեսում ու այլ ուղղություններ,

• շարունակաբար բարելավել հաճախորդների սպասարկման որակը և ճկունությունը՝ կիրառելով տեխնոլոգիական առավել նորարարական լուծումներ,

• շարունակաբար զարգացնել Բանկի կողմից առաջարկվող գործիքների ռիսկերի կառավարման և անվտանգության համակարգերը,

• մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի և մասնագիտական ներուժի բարձրացման շարունակական բարելավում,

• Բանկի ծառայությունների մատուցման ավտոմատացման և SS լուծումների ներդրման շարունակական ապահովում:

Ներածական խոսք

Միջազգային շուկաներում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական իրադարձություններից Բանկն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հիմնական գործընկեր երկրներում ֆինանսական շուկան կանխորոշող մակրոտնտեսական ցուցանիշներին՝ տնտեսական աճ, գնաճ, տոկոսադրույքների, փոխարժեքների մակարդակ ու դրանց փոփոխությունների միտումներ, ներմուծման ու արտահանման փոփոխություններ և այլն:

2025թ-ի 2-րդ կիսամյակի ավարտին տնտեսական աճի ցուցանիշը գրանցեց 7.2% արդյունք: 2025թ-ին ՀՀ տնտեսությունը հիմնականում գրանցել է աճի միտումները: Աճի հիմնական շարժիչներն են՝ արդյունաբերությունը (պայմանավորված է հիմնական մետաղների արտադրության աճով) և շինարարությունը:

ԿԲ-ն 2025թ-ի ընթացքում վարել է մեղմ դրամավարկային քաղաքականություն և շարունակաբար նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը: 16.12.2025թ-ին կայացած նիստում նվազեցրել է ևս 25 բազիսային կետով՝ սահմանելով 6.5%:

2026թ-ի հունվարի 19-ին Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմից հրապարակված զեկույցում (IMF World Economic Outlook update January 19) 2026թ-ի համար կանխատեսվում է համաշխարհային տնտեսական աճ 3.3%, իսկ 2027թ-ին՝ 3.2%: ԱՄՆ-ում տնտեսական աճը կանխատեսվում է 2.4% 2026թ-ին և 2.0% 2027թ-ին: Աճը կաջակցվի հարկաբյուջետային խթաններով, դրամավարկային քաղաքականության մեղմացմամբ և կորպորատիվ ներդրումների խթանող հարկային արտոնություններով: Առևտրային սահմանափակումների բացասական ազդեցությունը ժամանակի ընթացքում կթուլանա: Տեխնոլոգիական ոլորտի աճի տեմպերը կդանդաղեն, բայց այն կշարունակի դրական ազդեցություն ունենալ՝ մասամբ մեղմելով ներգաղթի նվազման և սպառման տեմպերի դանդաղման ազդեցությունը: Եվրոգոտու երկրներում տնտեսական աճը կանխատեսվում է 1.3% 2026թ-ի և 1.4% 2027թ-ի համար: Եվրոգոտին վերջին տարիներին ավելի քիչ օգուտ է ստանում տեխնոլոգիական ոլորտի խթանված ներդրումներից: Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով էներգիայի գների շարունակական բարձրացումը շարունակում է ճնշել արդյունաբերական հատվածը:

ՀՀ-ում տնտեսական ակտիվությունը 2025թ. ընթացքում ձևավորվել է ինչպես ներքին պահանջարկի, այնպես էլ առաջարկի մի շարք գործոնների համակցված ազդեցությամբ: Տարվա առաջին կիսամյակում պահպանվել են դրական մակրոտնտեսական միտումները՝ պայմանավորված պետական աջակցության շարունակականությամբ, ներդրումային ծրագրերի ընդլայնմամբ և մասնավոր սպառման աճով: Միաժամանակ, տարվա երկրորդ կիսամյակում՝ հատկապես չորրորդ եռամսյակում, տնտեսական աճը դարձել է ավելի բազմագործոն՝ պայմանավորված ծառայությունների ոլորտի արագ ընդլայնմամբ, շինարարության բարձր ակտիվությամբ և արտաքին ֆինանսական հոսքերի շարունակական ազդեցությամբ:

2025թ-ի 2-րդ կիսամյակում ՀՀ բանկային համակարգի արձանագրած ցուցանիշները վկայում են, որ առևտրային բանկերը, հիմնականում գրանցել են դրական արդյունքներ ինչպես շահույթի, այնպես էլ բանկերի գործունեությունը բնութագրող մյուս հիմնական ցուցանիշների մասով:

2025թ. արդյունքներով Բանկի հիմնական ֆինանսական ցուցանիշները հիմնականում պահպանել են իրենց դիրքերը՝ գրանցելով՝ 9,1 մլրդ ՀՀ դրամ շահույթ:

Բանկի ROA և ROE ցուցանիշները կազմում են համապատասխանաբար՝ 1.94% և 11.08%: Համակարգի ROA և ROE միջին ցուցանիշները նշված ժամանակահատվածի համար կազմել են համապատասխանաբար՝ 3.13% և 17.45%:

Միաժամանակ, 2025թ-ի գործունեության արդյունքներով մեկ աշխատողին բաժին ընկնող հասույթի և զուտ շահույթի ցուցանիշների գծով Բանկը համակարգում զբաղեցնում է բարձր դիրքեր:

Բանկի Խորհուրդի, կառավարման մարմինների, աշխատակիցների ջանքերի և հաճախորդներին միտված մոտեցումների շնորհիվ հնարավոր է դարձել պահպանել Բանկի պրոդուկտների մրցակցային պայմանները և ներգրավել նոր հաճախորդներ: Հաճախորդների հետ մեր ամենօրյա աշխատանքը բերել է պրոդուկտների պայմանների պարբերաբար վերանայումների, հնարավոր մատչելի ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը և նոր պրոդուկտների մշակմանը՝ առավելագույնս բավարարելով նրանց պահանջմունքները:

Միջազգային կառույցների հետ համագործակցությունը Բանկի համար ռազմավարական նշանակություն ունի, և հիմնական նպատակներից մեկը ոչ միայն գործող գործընկերային հարաբերությունների խորացումն է, այլև նոր կապերի ստեղծումն ու ընդլայնումը: Միջազգային կառույցների հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս Բանկին իր հաճախորդներին առաջարկել հստակ նպատակայնություն ունեցող բարենպաստ պայմաններով վարկային գործիքներ, մեծացնել որոշակի ոլորտներում պորտֆելի ծավալը, ներգրավել նոր հաճախորդներ: Միևնույն ժամանակ միջազգային ֆոնդերը տրամադրում են նաև տեխնիկական աջակցություն և մասնագիտական գիտելիքներն ավելացնելու բազմաթիվ հեռահար դասընթացներ, ինչը բարձրացնում է Բանկի ներքին կարողությունները: Հետագայում ևս Բանկն իր հաճախորդներին կառաջարկի արդյունավետ համակցված վարկատեսակներ և այլ գործիքներ՝ պահպանելով հիմնականում կորպորատիվ հաճախորդների ներգրավման և սպասարկման սկզբունքները: Մասնավորապես.

- ՎԶԵԲ-ի հետ համատեղ համագործակցության ողջ ընթացքում հաջողությամբ ֆինանսավորվել են ՓՄՁ, Առևտրի ֆինանսավորման և Էներգախնայողության մի շարք ծրագրեր: 2025թ.-ին շարունակվել է ՎԶԵԲ-ի հետ համագործակցությունը SMEC և MSME գործիքների ուղղությամբ՝ ներգրավելով 2 պայմանագրերի գծով 2-րդ տրանշները 8 մլն ԱՄՆ դոլար ծավալով: ԱՖԾ-ի սահմանաչափը 2025թ-ին կազմել է 28.5 մլն ԱՄՆ դոլար, որը ՀՀ բանկային համակարգում ամենամեծ սահմանաչափերից է: 2025թ-ի մայիսի 13-15-ը Լոնդոնում կայացած ՎԶԵԲ-ի 34-րդ բիզնես համաժողովի շրջանակում Առևտրի ֆինանսավորման ծրագրի (TFP) ոլորտում նախորդ տարվա ցուցանիշների արդյունքներից ելնելով՝ «ԱրմՍվիսԲանկ» ՓԲԸ-ն արժանացել է **«2024թ-ի Ամենաակտիվ Թողարկող Բանկը Հայաստանում» և «Տարվա Կանաչ Գործարք» մրցանակներին:** ՎԶԵԲ-ի կողմից «Ամենաակտիվ Թողարկող Բանկ» մրցանակին Բանկն արժանանում է արդեն **յոթերորդ տարին** անընդմեջ:

Հատկանշական է, որ կլիմայական անցման պլանավորման ուղղությամբ ներքին կարողությունների ձևավորման Բանկի փորձը ՎԶԵԲ-ի 34-րդ բիզնես համաժողովի շրջանակում ներկայացվել է որպես Հայաստանից լավագույն օրինակ՝ տեղ գտնելով ՎԶԵԲ-ի Climate transition of the financial sector 2025 զեկույցում՝ ընդգծելով Բանկի առաջատար դերը կայուն ֆինանսավորման և կլիմայական կարողությունների զարգացման գործում:

- Բանկը ԱԶԲ-ի հետ համագործակցում է Առևտրի ֆինանսավորման ծրագրի (ԱՖԾ) շրջանակում 9 մլն ԱՄՆ դոլար սահմանաչափով: Բանկն Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) կողմից, Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակում երեք անգամ արժանացել է **«Առաջատար գործընկեր բանկ Հայաստանում» (“Leading partner bank in Armenia”)** մրցանակին:
- Բանկը ակտիվ մասնակցություն ունի KfW բանկի և EIB կողմից ԳՀՀ-ի միջոցով իրականացվող մի շարք ծրագրերին: Ավելին՝ 2025թ-ին, ընդլայնելով համագործակցության շրջանակը, միացել է նաև KfW բանկի «Վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության խթանման 7-րդ փուլին: Ծրագրի միջոցները պետք է ուղղվեն վերականգնվող էներգիայի ոլորտում ներդրումների ֆինանսավորմանը և էներգաարդյունավետ ներդրումների ֆինանսավորմանը: Նշված ծրագիրը հնարավորություն է տալիս Բանկին հաճախորդներին առաջարկել մատչելի և մրցունակ դրամային վարկեր:
- Շարունակվել է **Եվրոպական Ներդրումային Բանկի (ԵՆԲ)-ի** հետ համագործակցությունը 2024թ-ին ստորագրված 16 մլն եվրո ընդհանուր ծավալով վարկային պայմանագրի շրջանակում՝ Հայաստանում մանր, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) ֆինանսական հասանելիությունն ընդլայնելու նպատակով:
- 2025թ-ի փետրվարի 28-ին Բանկն առաջին անգամ ՀՀ-ում կնքել է 20 մլն եվրո ծավալով երաշխիքային գործիքի պայմանագիր **Եվրոպական Ներդրումային Ֆոնդի (EIF)** հետ: Նոր ֆինանսական միջոցները նպատակ ունեն խթանելու Հայաստանի տնտեսության զարգացմանը՝ աջակցելով փոքր ու միջին ձեռնարկություններին (ՓՄՁ) և կանանց ձեռներեցությանը: Միաժամանակ այս գործիքը մեծացնում է ՀՀ ՓՄՁ-ների հասանելիությունը ֆինանսներին:
- 2025 թվականի փետրվարի 18-ին Հարավային Կորեայում տեղի ունեցած **Կանաչ Կլիմայի Հիմնադրամի (GCF)** Խորհրդի 41-րդ տարեկան ժողովի ընթացքում Բանկը ստացավ հավատարմագրում՝ դառնալով Հայաստանի Հանրապետությունում GCF-ի կողմից հավատարմագրված առաջին և միակ մասնավոր կառույցը: Հավատարմագրված լինելով GCF-ի կողմից՝ ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը ստանձնում է էկոլոգիապես կայուն նախագծերի ֆինանսավորման առաջամարտիկի դեր՝ աջակցելով տեղական ընկերություններին և կազմակերպություններին՝ իրականացնելով կանաչ ներդրումներ: Բանկը կկենտրոնանա էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի, կայուն ենթակառուցվածքների, գյուղատնտեսության և այլ բնապահպանական նախագծերի ֆինանսավորման վրա, որոնք կնպաստեն ՀՀ կլիմայական ռազմավարության իրականացմանը:

- Բանկի և Եվրոպական Ներդրումային Բանկի (ԵՆԲ) միջև կնքված **Greening Financial Systems Technical Assistance Program (GFS TAP)** տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակում ԱրմՍվիսԲանկը պաշտոնապես հրապարակել է իր առաջին Կլիմայական անցումային պլանը՝ ներկայացնելով Բանկի կլիմայական փոփոխություններին արձագանքելու առաջին համալիր ռազմավարական փաստաթուղթը, որը համահունչ է Փարիզի համաձայնագրի նպատակներին և ՀՀ ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ (մինչև 2050թ.) ռազմավարությանը:
- Բանկը 2024թ-ի հունվարից համագործակցում է **PCAF (Partnership For Carbon Accounting Financials)** կազմակերպության հետ, որի մեթոդաբանությունը օգնում է ֆինանսական հաստատություններին հաշվարկել իրենց ածխածնի արտանետումները, այդպիսով նպաստելով ավելի պատասխանատու ֆինանսական գործունեության զարգացմանը: Այս համագործակցությամբ Բանկը կարողացել է ունենալ իր 2023թ. և 2024թ. GHG արտանետումների հաշվետվությունները և համապատասխանեցնել իր գործունեությունը միջազգային կլիմայական նպատակներին:
- Բանկը 2025թ-ի հունվարին միացել է Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագրի ֆինանսական նախաձեռնությանն (UNEP FI) անդամակցությանը, որով հավաստում է իր հանձնառությունը որպես ՄԱԿ-ի Պատասխանատու բանկային գործունեության սկզբունքների (PRB) ստորագրող կողմ:
- Բանկը միացել է **BACEE** միությանը, ինչը հնարավորություն կտա ընդլայնել իր տարածաշրջանային և միջազգային գործընկերային կապերը, ինչպես նաև օգտվել BACEE-ի կողմից առաջարկվող ծառայություններից: Անդամակցելով BACEE-ին՝ Բանկը ստացել է հնարավորություն ընդլայնելու գործընկերային ցանցը, մասնակցելու BACEE-ի միջոցառումներին և օգտվելու բրենդի առաջխաղացման հարթակներից: Միաժամանակ, կարող է ստանալ խորհրդատվություն միջազգային լավագույն գործելակերպերի վերաբերյալ՝ հատկապես AML/Compliance, առևտրի ֆինանսավորման և թղթակցային բանկային հարաբերությունների ուղղություններով:
- Բանկի Climate Intelligence: ArmSwissBank Leads Green արշավը ճանաչվել է հաղթող հեղինակավոր IPRA Golden World Awards 2025 մրցանակաբաշխության **"Climate Change and Literacy"** անվանակարգում: Արշավը հաջողությամբ բարձրացրել է կլիմայական գործողությունների մասին իրազեկվածությունը, ներդրել է կանաչ գործելակերպեր Բանկի գործունեության մեջ և ներգրավել է գործընկերներ Հայաստանում ու միջազգային հարթակներում: Այն արտացոլում է Բանկի հանձնառությունը կայուն ֆինանսների և կլիմայի վերաբերյալ գիտակցված որոշումների խթանման ոլորտում:
- Մասնագետների պատրաստման/վերապատրաստման գծով շարունակական աշխատանքներներ են իրականացվել, մասնավորապես.

- ✓ **UN SSE ակադեմիայի** կողմից կազմակերպված **IFRS կայունության բացահայտման ստանդարտներ** դասընթացին մասնակցել է Բանկի 6 աշխատակից և ստացել սերտիֆիկատներ:
- ✓ Բանկի 1 աշխատակից մասնակցել է **House of Training-ի և ATTF Luxembourg-ի** կողմից կազմակերպված **«Sustainable Finance Certification Programme»** ծրագրին և ստացել վկայական:
- ✓ Բանկի 7 աշխատակից մասնակցել է **Candriam ակադեմիայի** կողմից կազմակերպված դասընթացներին և ստացել համապատասխան վկայականներ:
- ✓ Բանկի 1 աշխատակից մասնակցել է **UNEP FI PRB ակադեմիայի** կողմից կազմակերպած **Getting Started in Responsible Banking** դասընթացին և ստացել վկայական:
- ✓ Բանկի 7 աշխատակից մասնակցել են **CSRD Institute**-ի կողմից կազմակերպված **CSRD Fundamentals դասընթացին** և ստացել վկայականներ:
- ✓ Բանկի 1 աշխատակից մասնակցել է **GARP ասոցիացիայի Foundations of Financial Risk (FFR)** դասընթացին և ստացել վկայական:
- ✓ Բանկի 7 աշխատակից մասնակցել է **Frankfurt School of Finance and Management** բարձրագույն բիզնես դպրոցի դասընթացներին և ստացել համապատասխան վկայականներ
- ✓ 2 աշխատակից մասնակցել է **Climate Bonds Initiative-ի** կողմից կազմակերպված **Sustainable Finance and Transition Planning to Reduce Methane Emissions in Agriculture** դասընթացին և ստացել վկայականներ:
- ✓ Բանկի աշխատակիցները մասնակցել են մի շարք տեղական և միջազգային ֆորումների, որոշ դեպքերում հանդես գալով որպես խոսնակ՝ ներկայացնելով Բանկի փորձը, նախաձեռնությունները և կայուն ֆինանսավորման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

- Հիփոթեքային վարկավորման շրջանակում Բանկը շարունակում է համագործակցել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ների ծրագրերի հետ, ինչպես նաև վերջինիս կողմից ֆինանսավորվող «Մատչելի բնակարան զինծառայողին» ծրագրի և «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության 2024-2026 թվականների պետական աջակցության» ծրագրի հետ:
- Նախաարտահանման և հետարտահանման վարկերի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում Բանկը շարունակելու է խորացնել «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի ապահովագրական վկայագրերի ապահովությամբ արտահանման վարկավորումը: Բանկը շարունակում է մնալ ՀԱԱԳ-ի հետ համագործակցող ամենաակտիվ կառույցը ՀՀ բանկային համակարգում: ՀԱԱԳ-ի հետ պարբերաբար քննարկվում են նոր գործիքակազմի նեդրման հնարավորությունները:

- Եվրասիական Զարգացման Բանկը (ԵԱԶԲ) և Տնտեսական Համագործակցության Միջազգային Բանկը (ՏՀՄԲ) որպես Բանկի հետ համագործակցող կառույցներ հնարավորություն են տալիս իր ծածկույթում գտնվող երկրների շրջանակներում մատուցել Առևտրի ֆինանսավորման տարբեր գործիքների ծառայություններ (Ակրեդիտիվներ, երաշխիքներ, RCA-ների ֆինանսավորում), սակայն որոշ գործիքների դեպքում (օրինակ RCA-ների վերաֆինանսավորում) կիրառվող տոկոսադրույքի ոչ գրավիչ լինելու պատճառով այս շրջանում լայնորեն չի կիրառվում:
- Թղթակցային հարաբերությունների ընդլայնման, ինչպես նաև ներդրումային ծառայությունների առաջմղման շրջանակում ստեղծվել է.
  - ✓ BCC բանկի հետ կնքվել է Արտարժույթի շուկայում գործարքների իրականացման գլխավոր համաձայնագիր, որն ի լրումն ստանդարտ արտարժութային գործարքների հնարավորություն է տալիս իրականացնել ֆորեքս գործարքներ
  - ✓ BNB բանկի հետ կնքվել է Արտարժութային շուկայում գործարքների իրականցման գլխավոր համաձայնագիր, որը հնարավորություն է տալիս իրականացնել ֆորեքս գործարքներ
  - ✓ Բացվել է թղթակցային ռուբլու հաշիվ ռուսական Solid Բանկում, որը հնարավորություն է տալիս տեղաբաշխել ավանդ՝ օվերնայթ կամ ժամկետային ձևաչափով:
  - ✓ Բացվել է թղթակցային ռուբլու հաշիվ ռուսական Մոսկոմմերցբանկում, որը հնարավորություն է տալիս տեղաբաշխել ավանդ՝օվերնայթ կամ ժամկետային ձևաչափով:
  - ✓ Բացվել է թղթակցային եվրո հաշիվ իտալական Banca Popolare di Sondrio ում, որը հնարավորություն է տալիս աշխատել նաև առևտրի ֆինանսավորման գործիքներով:
  - ✓ Իրականացվել է Վիզա ընկերության հետ B2B վճարային համակարգի ներդրման գործընթացը, որը միտված է զարգացնել կորպորատիվ հաճախորդների փոխանցումների աշխարագրությունը ինչպես ԱՄՆ դոլարով, եվրոյով, այդպես էլ մի շարք այլ արժույթներով:
  - ✓ Ստորագրվել է համաձայնագիր Евразийская перестраховочная компания (ЕПК)-ի հետ առևտրի ֆինանսավորման ուղղությամբ համագործակցության նպատակով:
- Բանկը, ներկայումս համագործակցում է UBS Switzerland AG, UnicreditBank Austria AG, ODDO BHF, Banco Popolare di Sondrio, Visa International, Bank of Georgia, TBC Bank, China Construction Bank, Mashreq Bank, Zhejiang Chouzhou Commercial Bank, Մոսկոմմերցբանկ, BCC և BNB բանկերի հետ, ինչի շնորհիվ իր հաճախորդներին առաջարկվում է տարբեր երկրներ միջազգային փոխանցումների իրականացման հնարավորություններ, ինչպես նաև առևտրի ֆինանսավորման լուծումներ, ոսկով գործարքներ, ֆորեքս գործարքներ և այլն:
- Բանկը համագործակցում է շվեյցարական հայտնի Valcambi ընկերության հետ, որը մասնագիտացած է բարձրորակ ներդրումային ոսկու արտադրության մեջ:

2025 թվականի նոյեմբերին Բանկը ներմուծել է 9 կգ **Valcambi Suisse** շվեյցարական ոսկու ձուլակտորներ՝ նպատակ ունենալով շարունակել գործունեության այս ուղղության զարգացումը նաև 2026 թ-ին:

- Բանակցություններ են տարվում Visa կազմակերպության հետ վճարային նոր գործիքի՝ **Visa Direct-ի** ներդրման ուղղությամբ, որը հնարավորություն կտա իրականացնել ֆիզիկական անձանց փոխանցումներ տեղական արժույթով, ինչպես նաև քարտից քարտ փոխանցումներ: Հարկ է նշել, որ Վիզա B2B ծառայության ներդրումից ի վեր Բանկը հնարավորություն է ստացել իրականացնել արտարժութային փոխանցումներ շուրջ 120 երկիր ինչպես ԱՄՆ դոլարով և եվրոյով, այնպես էլ տեղական և բազմաթիվ այլ փոխարկելի արժույթներով: 2025թ-ի ապրիլ ամսից ի վեր Բանկն իրականացրել է շուրջ 300 միլիոն ԱՄՆ դոլար ծավալով փոխանցումներ, իսկ նոյեմբերից սկսած արդեն հնարավորություն ունի ստանալ Visa համակարգի հետ անդամակցող բանկերից մուտքային փոխանցումներ:
- Բանակցություններ են տարվում ODDO BHF և Bank of Georgia բանկերի հետ ԱՄՆ դոլարով փոխանցումների իրականացման նպատակով:
- Բանակցություններ են տարվում Азиатско-Тихоокеанский Банк (АТБ) և Центр-Инвест բանկերում թղթակցային հաշիվներ բացելու հնարավորության շուրջ՝ պատժամիջոցների հետ կապված հնարավոր ռիսկերը նվազեցնելու նպատակով:
- Ներդրվել է ներքին աշխատանքների արդյունավետության բարելավման նոր մեխանիզմներ, մասնավորապես, ներդրվել է Իրավաբանական անձ և ԱՁ վարկառուների վարկերի մասով NACE կոդերի հաշվառման մեխանիզմ՝ հաշվետվողականության հնարավորությամբ, կնքվել է համագործակցության պայմանագիր OCTO BI ընկերության հետ, որի արդյունքում Բանկը ստացել է հասանելիություն Բանկային համակարգի համեմատական վերլուծություններ և հաշվետվություններ պարունակող հարթակին:
- Ակտիվացվել է ARCA Pay համակարգը, ինչպես նաև ARCA QR համակարգը մոբայլ հեռախոսներով վճարումներ կատարելու համար
- Ընթացիկ իրականացվել են նոր շենքի տեղափոխման ուղղությամբ մարքեթինգային աշխատանքներ, այդ թվում՝ Բանկի նոր ռեբրենդինգի, պաշտոնական կայք-էջի նոր տարբերակի մեկնարկման և մարքեթինգային գործիքների արդիականացմանն ուղղված աշխատանքներ: Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել Բանկի գործընկերների կողմից կազմակերպվող ցուցահանդեսներին, կոնֆերանսներին և այլ միջոցառումներին, որտեղ ներկայացվել են Բանկի ծառայությունները: Նկարահանվել են իմիջային հոլովակներ Բանկի պրոդուկտների վերաբերյալ, ինչպես նաև գովազդային արշավներ են իրականացվել Բանկի նոր պրոդուկտների մեկնարկի ժամանակ:

ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

/2025թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ/

Ցուցանիշ	Մեծություն /հազ. ՀՀ դրամով/	Տոկոսային փոփոխությունը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի նկատմամբ
Ընդհանուր ակտիվներ	473,210,121	1.11%
Ընդհանուր պարտավորություններ	382,851,165	-2.56%
Ընդհանուր կապիտալ	90,358,956	20.29%
Կանոնադրական կապիտալ	16,205,748	0.00%
Չբաշխված շահույթ	25,640,066	19.14%

ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԿՏԻՎՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի ակտիվները 2024թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ավելացել են ավելի քան 5,2 մլրդ ՀՀ դրամով (1.11 %-ով)՝ կազմելով մոտ 473,2 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի վերջին չորս տարիների ընթացքում ակտիվների աճի տեմպի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վերջինիս կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվությունն արտացոլված է ներքոնշյալ աղյուսակում:

ԱՆՎԱՆՈՒՄ	31/12/21	31/12/22	31/12/23	31/12/24	31/12/25
ԱԿՏԻՎՆԵՐ	398,420,438	385,112,192	429,190,102	468,023,940	473,210,121
Կանխիկ դրամական միջոցներ	1,895,416	2,947,963	2,530,728	1,831,028	1,847,397
Պահանջներ բանկերի նկատմամբ	25,644,763	25,875,662	21,255,665	25,620,600	38,254,487
Պահանջներ այլ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	2,389,404	6,217,407	12,170,461	13,744,540	8,120,789
Բանկին պատկանող արժեթղթեր	153,851,984	133,432,483	122,468,152	116,048,596	127,177,598
Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր	89,923,037	78,718,547	88,595,879	90,151,363	63,448,293
Ռեպո համաձայնագրեր	188,950	1,163,183	258,227	410,796	1,470,496

Վարկեր	120,331,009	124,400,646	167,763,643	197,494,625	200,601,714
Ֆինանսական վարձակալություն	2,096,193	4,107,822	7,583,321	11,886,078	17,993,954
Ֆակտորինգ	2,230,538	2,587,504	2,726,040	3,616,425	6,331,833
Հիմնական միջոցներ	2,636,017	2,646,539	2,888,987	2,972,181	3,015,532
Ոչ նյութական ակտիվներ	201,056	223,457	264,850	303,456	336,435
Այլ ակտիվներ	5,597,939	5,735,735	7,148,453	13,109,260	12,135,131
Պահուստներ	-8,968,188	-7,420,638	-8,954,727	-11,001,777	-8,980,343
Ամորտիզացիա	-1,120,957	-767,518	-986,431	-1,233,103	-1,446,742

Բանկի ակտիվների կազմում գերակշռող մասը կազմում են արժեթղթերը և վարկերը՝ համապատասխանաբար 40% և 47%:

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

2025թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի վարկային պորտֆելը կազմել է շուրջ 227,8 մլրդ ՀՀ դրամ, որը 2024թ-ի վերջի համեմատ ավելացել է շուրջ 13,6 մլրդ ՀՀ դրամով կամ 6.4%-ով:

ԲԱՆԿԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊՈՐՏՖԵԼ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի արժեթղթերի մնացորդը կազմել է մոտ 190,6 մլրդ ՀՀ դրամ, որը 2024թ-ի վերջի ցուցանիշի համեմատ նվազել է 15,6 մլրդ ՀՀ դրամով (7.6%-ով):

2025թ-ի ընթացքում Բանկի կողմից արժեթղթերով կնքված գործարքների ծավալը կազմել է շուրջ 41,9 մլրդ ՀՀ դրամ:

Ընդ որում, պետական պարտատոմսերով կնքված գործարքների ծավալը 2025թ.-ի ընթացքում կազմել է 19,7 մլրդ ՀՀ դրամ, որը կնքված ընդհանուր գործարքների շուրջ 47.0%-ն է:

Կորպորատիվ պարտատոմսերով կնքված գործարքների ծավալը կազմել է 22,2 մլրդ ՀՀ դրամ, որը կնքված ընդհանուր գործարքների շուրջ 53.0%-ն է:

ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ

2015թ-ից մինչև 2025թ-ի դեկտեմբերի 31-ը Բանկն իրականացրել է պարտատոմսերի 26 թողարկումների տեղաբաշխում հետևյալ պայմաններով՝

Աղյուսակ 1. Բանկի կողմից թողարկված, տեղաբաշխված և մարված պարտատոմսերի նկարագիրը 31.12.2025թ-ի դրությամբ.

	Թողարկման արժույթ	Տեղաբաշխման ծավալ	Ժամկետայնություն	Արժեկտրանային եկամտաբերություն	Մարման ժամկետ	Անվանական արժեք
2015 թվական						
SWISB1	USD	2,000,000	3 տարի	7.50%	16/04/18	1,000
SWISB2	USD	3,000,000	4 տարի	8.00%	16/04/19	1,000
SWISB3	USD	5,000,000	5 տարի	8.50%	27/04/20	1,000
2017 թվական						
SWISB4	USD	10,000,000	7 տարի	6.75%	15/06/24	100
SWISB5	EUR	10,000,000	6 տարի	5.00%	15/06/23	100
SWISB6	AMD	2,000,000,000	4 տարի	12.75%	15/06/21	50,000
2018 թվական						
SWISB7	AMD	3,000,000,000	5 տարի	11.50%	24/05/23	50,000
SWISB8	USD	6,000,000	7 տարի	6.50%	24/05/25	100
SWISB9	USD	10,000,000	6 տարի	6.00%	22/11/24	100
2019 թվական						
SWISB7	AMD	3,000,000,000	5 տարի	11.50%	24/05/23	50,000
SWISB2A	USD	5,000,000	6 տարի	6.50%	02/05/25	100
SWISB2B	EUR	3,000,000	4 տարի	4.00%	02/05/23	100
2020 թվական						
SWISBC	AMD	10,000,000,000	5 տարի	9.00%	01/06/25	50,000
SWISBD	USD	10,000,000	6 տարի	6.00%	01/06/26	100
SWISBE	EUR	10,000,000	5 տարի	3.50%	01/06/25	100
SWISBF	AMD	10,000,000,000	6 տարի	8.50%	28/09/26	50,000
2023 թվական						
SWISBH	AMD	6,000,000,000	4 տարի	11.75%	01/06/27	50,000
SWISBI	USD	10,000,000	4 տարի	6.00%	01/06/27	100
SWISBJ	EUR	9,400,000	4 տարի	4.50%	01/06/27	100
2024 թվական						
SWISBM	AMD	5,000,000,000	4 տարի	10.20%	10/06/28	50,000
SWISBK	AMD	4,650,000,000	2 տարի	10.00%	21/10/26	50,000
SWISBL	AMD	5,000,000,000	3 տարի	10.00%	12/08/27	50,000
SWISBN	USD	8,148,600	3 տարի	6.00%	21/10/27	100
SWISBO	USD	15,000,000	4 տարի	6.25%	10/06/28	100
SWISBP	EUR	3,200,500	4 տարի	5.00%	10/06/28	100

2025 թվական						
SWISBR	AMD	7,000,000,000	4 տարի	10.25%	16/06/29	50,000
SWISBS	AMD	7,000,000,000	5 տարի	10.50%	16/06/30	50,000

Բոլոր տեղաբաշխումների արդյունքում Բանկին հաջողվել է հավաքագրել 62,7 մլրդ ՀՀ դրամի, 84,1 մլն ԱՄՆ դոլարի և 35,6 մլն եվրոյի չափով դրամական միջոցներ: 31.12.2025թ-ի դրությամբ արդեն 14 թողարկումները մարված են եղել՝ 18 մլրդ ՀՀ դրամ, 41 մլն ԱՄՆ դոլար և 23 մլն Եվրո ընդհանուր ծավալով:

Թողարկված բոլոր պարտատոմսերը տեղաբաշխման ավարտից հետո ցուցակվել և շրջանառվում են Հայաստանի ֆոնդային բորսայում:

Միաժամանակ, պարտատոմսերի իրացվելության ապահովման նպատակով Բանկն օգտվում է շուկա ստեղծողի ծառայություններից, ինչն ապահովել է Հայաստանի ֆոնդային բորսայի առևտրային նստաշրջաններում պարտատոմսերի երկկողմանի գնանշումները: Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը շուկայում հանդիսանում են ամենաիրացվելի և ամենապահանջված արժեթղթերից:

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ

2025թ. ընթացքում Բանկը միջբանկային և ներբանկային արտարժութային շուկայում հիմնական փոխարկելի արժույթներով իրականացրել է շուրջ 1347,9 մլրդ ՀՀ դրամի առք ու վաճառքի գործառնություններ:

Բանկը միջբանկային և ներբանկային շուկաներում իրականացրել է ավելի քան 148,2 մլրդ ՀՀ դրամի արտարժութային սվոփ գործառնություններ:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ

Հաշվետու ժամանակաշրջանում 2024թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ Բանկի պարտավորությունները նվազել են մոտ 10,1 մլրդ ՀՀ դրամով, կամ 2.56%-ով՝ կազմելով 382,9 մլրդ ՀՀ դրամ: Բանկի սեփական կապիտալը ավելացել է մոտ 15,2 մլրդ ՀՀ դրամով:

Ստորև ներկայացված աղյուսակում արտացոլվում են Բանկի պարտավորությունների և կապիտալի աճի դինամիկան վերջին հինգ տարիների համար:

Աղյուսակ					հազ ՀՀ դրամ
	2021	2022	2023	2024	2025
Պարտավորություններ	339,353,492	334,437,260	370,134,682	392,904,065	382,851,165
Կապիտալ	59,066,946	50,674,932	59,055,420	75,119,875	90,358,956

ԿԱՊԻՏԱԼ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի Ընդհանուր կապիտալը կազմել է 90,4 մլրդ ՀՀ դրամ, որը ավելացել է 2024թ. դեկտեմբերի 31-ի ցուցանիշի համեմատ 20.29%-ով: Բանկի կապիտալի ավելացումը պայմանավորված է վերագնահատման պահուստների նվազմամբ և գլխավոր պահուստի մեծացմամբ:

ՇԱՀՈՒՅԹ

Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով Բանկի զուտ շահույթը(վնասը) կազմել է 9,1 մլրդ ՀՀ դրամ 2024թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ նվազելով 695 մլն ՀՀ դրամով (7.08%):

2025թ. Բանկի շահութաբերության ցուցանիշները կազմել են՝
ROE -11.08%
ROA -1.94%:

ԲԱՆԿԻ ՀԵՏԱԳԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՋՈՐԴ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Բանկի հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով սահմանված նպատակային թիրախներով ու չափանիշներով: Նախատեսվում է 2026 թվականի համար հետևյալ նպատակների իրականացումը.

- Շարունակել ավելացնել վարկային և ֆակտորինգային պորտֆելները՝ հաճախորդներին առաջարկելով կորպորատիվ բանկային ծառայությունների լայն փաթեթ, որը կներառի ինչպես ավանդական, այնպես էլ ոչ ավանդական բանկային ծառայություններ, մասնավորապես՝ վարկեր, վարկային գծեր, հիփոթեքային վարկավորում, օվերդրաֆտ, ֆակտորինգ, լիզինգ, ինչպես նաև առևտրի ֆինանսավորման գործիքներ (ակրեդիտիվ, երաշխիք, գնման պատվերի ֆինանսավորում, արտահանման խթանման ֆինանսավորում և այլն), և հաճախորդների կարիքներից բխող այլ ծառայություններ:
- Ինչպես 2025թ-ին, այնպես էլ առաջիկա տարում Բանկը նախատեսում է ընդհանուր ակտիվներում ավելացնել վարկային պորտֆելը և նվազեցնել արժեթղթերի պորտֆելի ծավալները՝ ապահովելով դիվերսիֆիկացման ավելի բարձր մակարդակ,
- Պահպանել և զարգացնել շուկայում Բանկի դիրքերն այն հիմնական բիզնես-ուղղություններում, որտեղ Բանկը վերջին տարիներին մշտապես զբաղեցրել է առաջատար դիրքեր, միջազգային և տեղական շուկաներում ֆակտորինգային գործառնություններով ու բիզնեսի վարկավորման

շուկայում առանձին պրոդուկտների ուղղությամբ, որոնք պլանավորվող ժամանակահատվածում ունեն զարգացման մեծ պոտենցիալ,

- Բարելավել Բանկի դիրքերն այն հիմնական բիզնես ուղղություններում, որտեղ Բանկը չի զբաղեցնում առաջատար դիրքեր, սակայն ունի զարգացման էական պոտենցիալ,
- Բանկը 2026թ-ին նախատեսում է թողարկել «Կանաչ» պարտատոմսեր՝ ներգրավված միջոցները ուղղելով կայուն զարգացման և բնապահպանական նախագծերի ֆինանսավորմանը:
- Շարունակել ընդլայնել համագործակցությունը գործող միջազգային գործընկերների հետ՝ զարգացնելով առկա ծրագրերն ու նախաձեռնությունները, ինչպես նաև իրականացնել ակտիվ աշխատանքներ նոր գործընկերների ձեռքբերման և միջազգային համագործակցության աշխարհագրության ընդլայնման ուղղությամբ:
- օտարերկրյա շուկաներում բրոքերային ծառայությունների մատուցման ոլորտում Բանկի կողմից հաստատված համագործակցության շրջանակում նախատեսվում է բրոքերային և պահառուական ծառայությունների ծավալների ավելացման ուղղված ակտիվ աշխատանքների իրականացում:
- Շարունակել համագործակցությունը պոտենցիալ և արդեն գոյություն ունեցող թողարկողների հետ՝ նոր թողարկումների կազմակերպման ծրագրերի ուղղությամբ: Սակայն Բանկն արժեթղթերի թողարկումների ծավալների թվային կանխատեսումներ չի իրականացնում:
- Բանկի կողմից ոսկու ստանդարտացված ձուլակտորների ձեռքբերման համար մատակարար ընկերությունների հետ, այդ թվում՝ ոսկու հեջավորման ոլորտում, արդյունավետ գործընկերային հարաբերությունների ընդլայնում և ոսկու ստանդարտացված ձուլակտորների ծավալների ավելացման ուղղված աշխատանքներ:
- Բանկը շարունակելու է արտարժութային գործառնությունների ուղղությամբ արդյունավետ գործընկերային հարաբերությունների ընդլայնումը և ակտիվ արժութային գործառնությունների իրականացումը ՀՀ ներքին ֆինանսական շուկայում և օտարերկրյա գործընկերների հետ:
- Հաճախորդների, այդ թվում՝ վարկավորման սպասարկման պայմանների, անվտանգության և որակի շարունակական բարելավում, այդ թվում՝ նոր հեռանկարային հաճախորդների ներգրավում:
- Բանկը շարունակում է զարգացնել կլիմայական ռիսկերի ինտեգրումը ռիսկերի կառավարման համակարգում՝ ներառելով ինչպես ֆիզիկական, այնպես էլ անցումային ռիսկերը: Այս գործընթացի առավել խորքային և արդյունավետ իրականացման նպատակով իրականացվել են համակարգային և խորացված վերլուծություններ՝ հիմնված համապատասխան կլիմայական ստրես-թեստերի արդյունքների և դրանցից բխող դիտարկումների վրա
- Բանկի պրոդուկտների մրցակցային պայմանների բարձրացման նպատակով շարունակել միջոցների ներգրավման ճկուն քաղաքականության վարումը:

- Ծառայությունների մատուցումը, գործընթացների վերահսկումը և ռիսկերի կառավարման արդյունավետությունը դարձնել էլ ավելի չափելի՝ օգտագործելով հաշիվների վարման և հաշվետվողականության նոր՝ ավելի խորացված չափանիշներ:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Բանկի կառավարման համակարգը մշտապես գտնվում է Բանկի Խորհրդի և Գործադիր մարմնի ուշադրության կենտրոնում և ելնելով տնտեսական ու մրցակցային միջավայրից, ԿԲ և օրենսդրական պահանջներից, ինչպես նաև Բանկի սեփական կարիքներից այն մշտապես կատարելագործվում է միջազգային բանկային փորձին համահունչ: Խորհուրդը մշտապես կարևորում է արդյունավետ կորպորատիվ կառավարման համակարգի ստեղծումը Բանկում: Բանկն իր կորպորատիվ կառավարման համակարգը կառուցել է «ստուգումների և հակակշիռների» (checks and balances) միջազգայնորեն ընդունված սկզբունքների հիման վրա:

Բանկն առաջնորդվում է միջազգային բանկային պրակտիկայում ընդունված սկզբունքներով՝ ստորաբաժանումների և աշխատակիցների միջև լիազորությունների, պարտականությունների և ֆունկցիաների հստակ տարանջատում, աշխատակիցների փոխարինելիության ապահովում, իրավասությունների պատվիրակման հստակ մեխանիզմների առկայություն, բաժնետիրոջ, Խորհրդի, գործադիր մարմնի, Ներքին և Արտաքին աուդիտորների միջև արդյունավետ համագործակցություն, որոշումների կայացման կոլեգիալության սկզբունք, ռիսկ պարունակող գործողություններում երկու անձի սկզբունքի կիրառում, գործառնությունների և գործողությունների մանրամասն փաստաթղթավորում ու կանոնակարգում, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության հստակ մեխանիզմների կիրառում, Բանկի զարգացման, գործարքների ու ծառայությունների ավելացմանը զուգահեռ կառուցվածքի կատարելագործում, հաշվետվողական և տեղեկատվական կայուն համակարգի առկայություն, կորպորատիվ վարքագծի արժեքների արժևորում և այլն:

Բանկի կառավարման համակարգը, նրա կազմակերպական կառուցվածքը մնալու են ճկուն՝ ելնելով արագ արձագանքման սկզբունքից և զարգացման տվյալ փուլում Բանկի առջև ծառացած խնդիրներից:

Բանկը կառավարման համակարգի կատարելագործման համար կարևորելու է ներդրված կորպորատիվ կառավարման սկզբունքների էլ ավելի խորացումը և ամրապնդումը՝ ապահովելով ԿԲ-ի պահանջները և համապատասխանելով միջազգային լավագույն փորձին: Շարունակվելու է Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների ուսումնասիրությունը՝ դրանց աշխատանքների օպտիմալացման, արդյունավետության բարձրացման, բաժինների և աշխատակիցների գործառույթների փոխանցման, իրավասությունների հստակեցման տեսանկյունից: Առավել ուշադրություն է դարձվելու Բանկի համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտների զարգացմանը:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բանկի կողմից կիրառվող ռիսկերի կառավարման մի շարք հիմնարար սկզբունքներ թույլ են տալիս արդյունավետ կառավարել ռիսկերը: Դրանք են՝ ներդրումային որոշումների ընդունման կոլեգիալ եղանակը, ռիսկերի բացահայտման, վերլուծության և

գնահատման համար ռիսկերի կառավարման մոդելների ու տարրերի կիրառումը, աշխատատեղերում իրավասությունների և պարտականությունների տարանջատումը, գործառնությունների իրականացումը առնվազն «երկու անձի» սկզբունքով, ռիսկային գործառնությունների համար սահմանաչափերի որոշումն ու հետևումը, ռիսկային ակտիվների դիվերսիֆիկացիան, հնարավոր կորուստների ծածկման համար պահուստների ձևավորումը, ռիսկի փոխանցումը երրորդ անձանց՝ ապահովագրության միջոցով, երբ դրանց նվազեցման օգուտները գերազանցում են գնահատված ծախսերը կամ դրանց նվազեցումը գործնականորեն անհնար է և այլն:

Գործառնական ռիսկի նվազեցման նպատակով Բանկում գործում է ապահովագրության փաթեթ, որն իր մեջ ներառում է բանկային ռիսկերի համապարփակ, էլեկտրոնային ու համակարգչային հանցագործության և մասնագիտական պատասխանատվության բաժինները: Բանկի կողմից ձեռք է բերվում նաև շենքի և գույքի ապահովագրություն:

Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանումն անկախ է գործարքներն իրականացնող ստորաբաժանումներից: Վերջինիս մեջ մտնող ստորաբաժանումները կառավարում են բանկային գործունեությանը վերաբերող տարբեր ռիսկեր:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը մշակում է ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը, մշակում է Բանկի ռիսկի ախորժակը, ռիսկերի ռազմավարությունը, վերականգնման ծրագիրը, գնահատում է կապիտալի համարժեքությունը, իրականացնում է սթրես թեստեր, վերահսկում է ֆինանսական ռիսկեր պարունակող գործառնությունները և Խորհրդին ու Տնօրինությանը ներկայացնում է հաշվետվություն Բանկի ռիսկերի, սահմանաչափերի և ուշադրություն պահանջող այլ հարցերի վերաբերյալ:

Վարկային ռիսկի կառավարման բաժինն իրականացնում է Վարկային կոմիտեի քննարկմանը ներկայացվող վարկային փաթեթների անկախ գնահատում, վարկային կոմիտեի կողմից սահմանված պայմանների վերահսկողություն, ֆինանսական, գործառնական և արտապլանային մոնիթորինգներ:

Համապատասխանության ապահովման պատասխանատուն իրականացնում է Բանկի համապատասխանության և համբավի ռիսկերի բացահայտում, կառավարում և մոնիթորինգ:

Ներքին դիտարկումների մարմինն իրականացնում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ու զանգվածային ոչնչացման զենքի ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ/ԶՈԶՏՖ) կանխարգելման միջազգային պատժամիջոցների պահանջներին համապատասխանության գործառույթներ:

Ռիսկերի կառավարման համակարգի ընդհանուր վերահսկողությունն իրականացնում է Բանկի Խորհուրդը: Գործադիր տնօրենը և կորպորատիվ կառավարման սկզբունքների հիման վրա ձևավորված կոլեգիալ մարմինները՝ Տնօրինությունը, Ներդրումային, Վարկային, Ակտիվների ու պասիվների կառավարման կոմիտեները և Համապատասխանության ապահովման հանձնաժողովը, ապահովում են ռիսկերի կառավարման քաղաքականությունների և ընթացակարգերի իրականացումը և ընթացիկ կառավարումը:

Բանկի Խորհրդի անդամներից ձևավորված Աուդիտի և ռիսկերի կառավարման կոմիտեն պարբերաբար քննարկում է Ներքին աուդիտի, ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման և այլ ստորաբաժանումների հաշվետվություններն ու աշխատանքների բարելավմանը վերաբերող հարցերը:

2025թ-ի ընթացքում ռիսկերի կառավարման շրջանակներում իրականացվել են կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացի բարելավում, վերականգնման ծրագրի վերանայում, գործառնական ռիսկերի ուսումնասիրություն, մի շարք ընթացակարգերի վերանայում, բնակլիմայական ռիսկերի հաշվետվողականության համակարգի ներդրման աշխատանքներ, վարկային պորտֆելների գնահատումներ ըստ ռիսկայնության:

Բանկում մշակվել և ներդրվել է անձնական տվյալների մշակման ընթացքում ռիսկերի նվազեցմանն ուղղված գործընթաց, մասնավորապես՝ ներքին իրավական ակտ և ծրագրային լուծումներ՝ ներառելով ՀՀ ԿԲ առաջարկները: Բանկի կողմից նաև ուսումնասիրվում և թարմացվում են ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների պահանջների արդյունավետ կիրառման ծրագրային լուծումները և համակարգերը, որի արդյունքում ընտրվում և ներդրվում են առավել ճկուն և ժամանակակից համակարգեր:

ԲԱՆԿԻ ԲՆԱԿԱՆՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Բանկի գործունեության հետ կապված հիմնական ռիսկերը ներկայացված են ստորև:

Վարկային ռիսկն առաջանում է բանկի փոխառուների կամ գործընկերների կողմից իրենց պայմանագրային պարտավորությունների չկատարման հետևանքով: Բանկը հաճախորդների հետ կապված ռիսկերը կառավարում/զսպում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման միջոցով, ինչպես նաև իրականացնում է ֆինանսական գործունեության վերլուծություն՝ հնարավոր ռիսկերը վաղ շրջանում բացահայտելու ու համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

Իրացվելիության ռիսկը կապված է հաճախորդների կամ գործընկերների հետ կապված պարտավորությունները Բանկի կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարման անկարողության հետ: Բարձր իրացվելի ակտիվների բարձր տեսակարար կշիռը թույլ է տալիս բանկին հնարավորինս զսպել այս ռիսկը:

Տոկոսադրույքի ռիսկը սպասվող դրամական հոսքերի փոփոխության և դրա հետևանքով բանկի զուտ տոկոսային եկամտի նվազման ռիսկն է, ինչպես նաև տոկոսադրույքների աճի հետևանքով արժեթղթերի պորտֆելի արժեքի նվազման ռիսկը:

Արտարժութային ռիսկը Բանկի արտարժութային ակտիվների և պարտավորությունների միջև անհամապատասխանությունից առաջացող ռիսկն է, որի համար Բանկը սահմանել է ԿԲ նորմատիվ ակտերով սահմանված չափանիշներից խիստ չափանիշներ: Այնուամենայնիվ, դրամի արժեզրկումը կարող է հանգեցնել արտարժութային վարկերի սպասարկման վատթարացմանը և հանգեցնել ֆինանսական կորուստների:

Արտաքին ռիսկերը այն ռիսկերն են, որոնց վրա Բանկը չունի կամ գրեթե չունի ազդելու հնարավորություն: ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը և բանկային ոլորտում հնարավոր փոփոխությունները կարող են բացասաբար ազդել Բանկի ֆինանսական արդյունքների վրա: Աշխարհաքաղաքական և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունները, ինչպես նաև դրա հետ փոփոխվող միջազգային պատժամիջոցները կարող են առաջ բերել այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ երկրի ընդհանուր տնտեսական վիճակի վրա, հանգեցնել տնտեսական ակտիվության և բնակչության եկամուտների նվազման, որն էլ բացասաբար կանդրադառնա Բանկի կողմից վարկավորվող տնտեսության բոլոր ճյուղերի վրա: Դրանք կարող են նաև բացասաբար ազդել կամ նոր մարտահրավերներ առաջ բերել Բանկի կողմից նոր գործընկերային հարաբերությունների հաստատման և միջազգային գործարքների իրականացման հարցում:

Բանկային գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:

ՀՀ-ում բանկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է և Բանկն, իր մրցակցային դիրքերն ամրապնդելու նպատակով հետևողականորեն առաջնորդվում է կորպորատիվ կառավարման սկզբունքներով, իրականացնում է իր կառավարման համակարգի ինստիտուցիոնալ համակարգված բարեփոխումներ, ներդնում է բանկային ինովացիոն առաջավոր տեխնոլոգիաներ, բարձրացնում է ծառայությունների սպասարկման որակը և մատչելիությունը:

ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Բանկում գործող ներքին հսկողության համակարգը բոլոր ռիսկային գործառնությունների համար նախատեսում է կրկնակի ստուգում և հաստատում մեկ այլ աշխատակցի կողմից:

Բանկի գործունեության և աշխատակիցների գործառույթների իրականացման ճշտության և կանոնակարգիչ ակտերին համապատասխանության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Բանկի ներքին հսկողական երեք օղակների՝ Ռիսկերի կառավարման, Համապատասխանության ապահովման և Ներքին աուդիտի ստորաբաժանումների միջոցով: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումն ամենօրյա հսկողություն է իրականացնում ֆինանսական ռիսկեր պարունակող գործառնությունների նկատմամբ: Համապատասխանության ապահովման պատասխանատուն իրականացնում է Բանկի համապատասխանության ռիսկի բացահայտում, կառավարում և մոնիթորինգ: Միևնույն ժամանակ Խորհրդի կողմից հաստատված աշխատանքային ծրագրերի

համաձայն Ներքին աուդիտի ստորաբաժանումն իրականացնում է Բանկի ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կորպորատիվ կառավարման գործընթացների արդյունավետության գնահատում: Համակարգի արդյունավետությունն ապահովվում է ստորաբաժանումների միջև իրավասությունների և պարտականությունների հստակ տարանջատման և փաստաթղթավորման առկայության, ինչպես նաև համադրումների կիրառման շնորհիվ:

2025թ.-ին Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանումն իրականացրել է Բանկի գործունեության համակողմանի գնահատում՝ ռիսկայնության վրա հիմնված աուդիտի սկզբունքներին համապատասխան: Առանձնահատուկ ուշադրության է արժանացել Բանկի ներքին հսկողության համակարգը, ՓԼ/ԱՖ կանխարգելող իրավական ակտերի դրույթների պահպանումն և միջազգային պատժամիջոցների պահանջների պահպանմանը:

2025թ.-ին Բանկում շարունակել է իր ակտիվ գործունեությունը Խորհրդին կից ձևավորված Աուդիտի և Ռիսկերի կառավարման կոմիտեն, որի հիմնական առաքելությունն է Բանկում ներքին աուդիտի դերի, այդ թվում՝ ներքին աուդիտ-խորհուրդ կապի, ինչպես նաև ռիսկերի կառավարման գործառույթի արդյունավետության բարձրացումը:

Համապատասխանության ապահովման պատասխանատուի կողմից շարունակվել է իրականացվել Բանկի Տնօրինության կողմից հաստատված տարեկան աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքները, որոնց նպատակն է նպաստել Բանկում համապատասխանության ապահովման մշակույթի կիրառմանը և կատարելագործմանը: Իր առջև դրված նպատակին հասնելու համար Համապատասխանության ապահովման պատասխանատու մարմնի կողմից ստուգումների միջոցով իրականացվում է Բանկի համապատասխանության ռիսկի բացահայտում, կառավարում և մոնիթորինգ:

ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկի երկարաժամկետ հաջողությունն ու կայուն զարգացումը պայմանավորված են բարձրակարգ, նախաձեռնող և պատասխանատու մարդկային ռեսուրսներով, որոնք հանդիսանում են կազմակերպության հիմնական արժեքը: 2025 թվականի ընթացքում Բանկը շարունակել է կատարելագործել անձնակազմի կառավարման իր մոտեցումները՝ ուղղված աշխատակիցների ներգրավվածության բարձրացմանը, ներքին ներուժի բացահայտմանն ու շարունակական մասնագիտական զարգացման խթանմանը:

Կադրային քաղաքականության առաջնահերթ նպատակներն են՝

- ապահովել մրցունակ և հավասարակշռված վարձատրության համակարգ,
- զարգացնել և ամրապնդել կորպորատիվ արժեքներն ու միասնական մշակույթը,
- ներգրավել և պահպանել խոստումնալից և փորձառու մասնագետների,
- ստեղծել կարիերայի աճի և առաջխաղացման թափանցիկ հնարավորություններ,
- խրախուսել գիտելիքների շարունակական զարգացումն ու վերապատրաստումը:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկը շարունակել է իրականացնել բազմաբնույթ կրթական և զարգացման ծրագրեր՝ ընդգրկելով մասնագիտական դասընթացներ,

թեմատիկ սեմինարներ և փորձի փոխանակման ներքին հարթակներ։ Այս նախաձեռնություններին մասնակցել են տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներ։ Հատուկ ուշադրություն է դարձվել հաճախորդամետ մոտեցումների կատարելագործմանը, թվային լուծումների կիրառմանը և կարգավորող դաշտի փոփոխություններին համապատասխան հմտությունների զարգացմանը։

Միաժամանակ, Բանկը մեծապես կարևորում է բարենպաստ և ապահով աշխատանքային միջավայրի ձևավորումը, ինչը նպաստում է աշխատակիցների ներգրավվածության և բավարարվածության մակարդակի աճին։ Տարվա ընթացքում իրականացվել են ներքին ուսումնասիրություններ և հարցումներ՝ բացահայտելու աշխատակիցների կարիքներն ու գնահատելու աշխատանքային պայմանները։

Աշխատակիցների արդյունավետության գնահատման և լավագույնների խրախուսման գործընթացը շարունակաբար իրականացվում է համապատասխան հանձնաժողովի միջոցով՝ ապահովելով կատարողականի օբյեկտիվ գնահատում և հետադարձ կապ։

Նոր աշխատակիցների ինտեգրման գործընթացը Բանկի համար շարունակում է մնալ կարևոր ուղղություն։ Այս նպատակով իրականացվում են մասնագիտական ադապտացիոն ծրագրեր, ինչպես նաև ներքին ուսուցման նախաձեռնություններ փորձառու մասնագետների ներգրավմամբ։

Աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով Բանկը ակտիվորեն համագործակցում է առաջատար կրթական և վերապատրաստման կենտրոնների հետ՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ ապահովելով միջազգային և տեղական փորձի համադրություն։

Ներքին գիտելիքների տարածման և մասնագիտական աճի խթանման նպատակով 2025 թվականին շարունակվել են աշխատակիցների կողմից կազմակերպվող սեմինարները, ներկայացումները և քննարկումները, որոնք նպաստում են վերլուծական մտածողության զարգացմանը և թիմային աշխատանքի արդյունավետությանը։

Կազմակերպության ներսում մի շարք գործընթացների բարելավման նպատակով ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնց շրջանակում քննարկված հարցերն ու առաջարկությունները ներկայացվում են Գործադիր մարմնին։

Կադրային ներուժի համալրման և զարգացման նպատակով Բանկը համագործակցում է բուհերի և հետբուհական կրթական հաստատությունների հետ՝ ձևավորելով ապագա մասնագետների ռեզերվ։

Չնայած 2026թ. հունվարի 01-ից առողջության պարտադիր ապահովագրության պետական համակարգի ներդրմանը՝ Բանկը պահպանել է իր սոցիալական պատասխանատվության քաղաքականությունը և վերակնքել է համագործակցությունը մասնավոր ապահովագրական ընկերության հետ՝ ապահովելով աշխատակիցների համար լրացուցիչ և ընդլայնված ապահովագրական փաթեթ։

Բանկը կարևորում է նաև աշխատակիցների սոցիալական բարեկեցությունը՝ տրամադրելով ներքին սոցիալական փաթեթ, որը նախատեսված է հանգստի, սպորտային և կրթական (ներառյալ ոչ մասնագիտական) ծրագրերի համար։

Աշխատակիցների անձնական կարևոր իրադարձությունները ևս գտնվում են Բանկի ուշադրության կենտրոնում. խրախուսվում են ամուսնությունը և երեխայի ծնունդը։ Բացի

այդ, կազմակերպվում են տարբեր կորպորատիվ միջոցառումներ՝ նպաստելով թիմային ոգու ձևավորմանը և համագործակցության ամրապնդմանը։

Վերոնշյալ բոլոր նախաձեռնությունները միտված են ձևավորելու փոխադարձ հարգանքի, վստահության և արդյունավետ համագործակցության վրա հիմնված առողջ կազմակերպական միջավայր։